«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան 0046, Բագրատունյաց 44, Հեռախոս 011 51 49 92, Էլ.փոստ՝ eltransport@yerevan.am

№ 129

18 մարտի 2026թ

«Սան-Սառա» ՍՊԸ-ն, տնօրեն Հ. Առաքելյանին

ՏԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի, (այսուհետ Պատվիրատու), և «Սան-Սառա» ՍՊԸ-ի, (այսուհետ Կատարող) միջև 2025թ. օգոստոսի 12-ին կնքվել է № ԵԷՏ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով պայմանագիր, որն ուժի մեջ է մտել 07.10.2025թ. կնքված №1 համաձայնագրով, համաձայն որի՝ Կատարողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված հենասյուների և կալունակների ներկման աշխատանքներ:

Կատարողը 13.01.2026թ. դուրս է գրել հաշիվ վավերագիր և ներկայացրել է աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման ընդունման արձանագրություն և ակտ, որին ի պատասխան 20 հունվարի 2026թ. Կատարողին ուղարկվել է գրություն (կցվում է) և կատարված անորակ աշխատանքների լուսանկարները, համաձայն որի, Կատարողին ներկայացվել է աշխատանքները չընդունելու հիմնավոր պատճառներն ու թերությունները: Կատարողը 05.02.2026թ.-ին գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին, որ ավարտվել են թերությունների շտկման աշխատանքները:

06.02.2026թ. «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի Պատասխանատու ստորաբաժանման համապատասխան աշխատակիցները «Սան-Սառա» ՍՊԸ-ի աշխատակցի հետ այցելել են Սայաթ-Նովայի պողոտա՝ աշխատանքների որակը ստուգելու նպատակով:

Արձանագրվել են թերություններ, որոնց վերաբերյալ 12.02.2026թ. ևս մեկ անգամ գրությամբ (կցվում է) և փաստացի լուսանկարներով Պատվիրատուն դիմել է Կատարողին և առաջարկել խելամիտ ժամկետում վերացնել թերությունները: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մինչ օրս թերությունների վերացման համար ոչ մի աշխատանք չի կատարվել՝ Պատվիրատուն առաջարկում է 5 աշխատանքային օրում կատարել որակավորման և պայմանագրի ապահովումների վճարում՝ համապատասխանաբար 347514 (երեք հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր տասնչորս) ՀՀ դրամի և 231676 (երկու հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամի չափով: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Պատվիրատուի բանկային հաշվին («Ամիո բանկ» ՓԲԸ, ՀՀ 1150008870220100):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի՝ «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն կձեռնարկի միջոցներ «Սան-Սառա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ **Ս.ԲԵՋԱՆՅԱՆ**